ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» թերթի հավելված

1991 թ. օգոստոս № 38: Գինը՝ 50 կոպ.

# ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՕՐԵՐԻ ԽՐՈՆԻԿԱ





Լուսանկարները՝ Հ. Կարապետյանի

## ՄԵՏԱՔՍԵ

### Այս ի՞նչ ես անում

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ախ, գիտեմ արդեն
Որ ժողովուրդս քեւ միշտ ծեծված,
Բայց Աստծո սիրված որդին է, Տեր իմ,
Ու նրա հոգու խորքում հողեղեն
Շատ բան կա սիրած Քո Քրիստոսից,
Որին խաչեցիր,
Փրկելու մեղքով տառապողներին...

Ախ, գիտեմ, արդեն,
Որ զայրացել ես անզավակներին
Սահման չունեցող ազատության դեմ,
Բարության բոլոր խոչընդոտումների,
Անարդարության,
Բնության սիրտը լցված դառնության
Ու սերի դեմ.
Եվ դու այդ անգութ
Բաղում մեղքերի հավիտյան համար
Ընտրեցիր սրա՞նց...
Հազար-հազարներ պատիկներ հագան փշե
բախտերի,
Հարսանիք, ծնունդ փոխվեցին, ավա՜ղ,
բազմաձայն բախերի.
Սիրո արևներ, բյուր բացուկներ մնացին
անբաց
Ու չարժանացան անգամ գորովի...
Հազար երազներ, երազներ հանգան չեն
ուխտերի.
Դայիններ կորան երեխաների,
Երկիրը բեկված կործանման վախով,
Եվ առանց փեսա հարսնացուների
Դեռ կանաչ-կարմիր օրօրոցները
լցվեցին հողով...

Ախ, գիտե՛մ, գիտե՛մ,
Որ զայրացել ես աշխարհի բոլոր
անիրավների,
Ինքնին ու հավատի ուրացողների,
Քո ավան մեկի փոխարեն այսօր՝
Տասներեսանի
Մարդու արնախում չարիքների դեմ...
Եվ դու ընտրեցիր նվաստագույն արդար,
Փլատակների ու քարերի մեջ հրխտեցիր,
Դամեցիր մահով բարձրահարկերի,
Որ ժողովուրդներ, հոգիներ զգան
Սարսափն նրա հանցակցության
Անմեղությունից
Ու սանձահարեն
Իրենց չարության կրքերն անհուն..

Ախ, գիտեմ արդեն,
Որ մեղավորին պատժելու համար
Դու անմեղին ես դնում միշտ Աստծո
Զոհասեղանին...
Ինչո՞ւ ես ինձնով ողբերգական վիշտը
բաղդատում,
Քավում մեղքերը այս բիրտ աշխարհի...
Որ Հայաստանն է դարձել Գողգոթա,
Որպես ես ինձ հետ կորուստներ բանի
Եվ մարմարների անծուծ ես լալիս
Պատուհանի տակ...
Աշխարհի բոլոր երեխաները հանել
Հայաստան,
Դրաստությունն
Հավերժություն են առնում Քո որդուց
Եվ հավաքում են ազնիվ հարությունն սուրբ
անեղծության
Եվ Քե՛զ, ով Բարձրյալ,
Քե՛զ, որ բաղել ես կուռամիտներին զորեր
հաստատար
Եվ հողաղետի գոյության յո՛ւյսն ես չափել
նինեվացոց
Տոնման ազրելու հավիտենությամբ.
Եվ ինչպես խաչված Քրիստոս որդիդ.
Քեզ եմ դիմում, Հա՛յր.
— Այս ի՞նչ ես անում...

### Մեկ է, մենք կապրե՛նք

Ո՞ւր ես իմ Քաղաք,
Անբառամ տառին պաշտելի Գյումրի,
Ուր ժամերգության լույսը Յոթ Վերքի
Գմբեթից ծորում, երգում էր զի՛նգ-զա՛նգ,
Մտնում անտուն,
Օրհնանք էր բաշխում ամեն նոր տարուն...

Ախ, տարի՛ չէ սա, դա՛ր է փորձության,
Սա անդունդ է ընդհուպ մահերի ու
դաժանության.
Ասա՛ ինձ, տատի, ինչո՞ւ է հայոց կոտորածներով
Անվերջ հաստատվում
Վայրագությունը մարդկային հոգու,
Եվ ինչո՞ւ, ասա՛, մեզնով են հարեն
Ճշգրտվում այսօր
Ո՛չ միայն խղճի ու համբերության
Սահմանները սուրբ,
Այլև բովանդակ
Բարության ուժը այս հողագնդի...

Ո՞ւր ես, իմ Քաղաք,
Լեզու է առել գետինը անգամ,
Ճնշում է ծանր, Մերը խուլ հեկեկում,
Այն ո՞վ է անում,
Այն ո՞վ է լալիս,
Երեխա՛ ճչաց.
Ձայներ են գալիս հողի ընդերքից
Սարսափած,
Վհա՜տ...
Գնում եմ գալիս հրաշք չուրջն անվերջ,
Ու զգում եմ, վա՜խ, ինչպես մարմրում,
Հանգչում են խորքում ձայները հատ-հատ...
Խլացարվում եմ անկարողության
Վիճակից իմ բութ...
Ես, ողորմելի՛ս,
Որ հնար չունեմ, բե այս վայրկյանին
Օգնության հասնեմ հողում խեղդվողին,
Սուզվեմ քարերի ու փլվածքի մեջ,
Որ գտնեմ մեկին
Փրկե՛մ, իմ Քաղաք...

Ո՞վ լուսահոգի, տանջված իմ տատի,
Իմաստուն էիր, երբ ձեռքս բռնած
Յոթ Վերք գնալիս
Փսփսում էիր, բե՝ Արարիչը ողբերգական,
Որպես սուրբ խորհուրդ,
Մե՛զ է փորձում ընտրել էն գլխից.
Որպես դիմացկուն, հզոր ժողովուրդ...
Եվ դիմանո՛ւմ ենք ի տես աշխարհի,
Եվ կդիմանա՛նք ի յուր չարերի,
Մե՛կ է, մենք հայ ենք, մե՛կ է, մենք կապրե՛նք,
Եվ լեզվով, ոգով
Հավերժին հույժին մենք կդիմանանք...
Եվ կկառուցե՛նք Քաղաքներ, գյուղեր,
Եվ կշենանա՛նք,
Եվ կշնանան շուրթերը մեր.
Որ մենք ի ծնե
Ունենք մշտական դեմք ու գրանցում,
Հավիտենության առեղծվածի մեջ...

Ո՞ւր ես, իմ Քաղաք,
Անբառամ տառին պաշտելի Գյումրի,
Ուզում եմ նրա առհավատներին
Տեսնել մի պահ չտապել ուշանում,
Բայց ավա՜ղ, չկա,
Չկա Յոթ Վերքի ողջությունը կուռ,
Վերածվել, տխուր ամփոփվել իր մեջ.
Աղոթում է լուռ...
Կարկամել, հուզվել Քաղաքում եմ տատասում
Եվ որոնում եմ տեսքն այն բարի,
Երբ գնում էին կենսախնդությամբ
Փողոցներ, անկր, մարդիկ բյուրավոր.
Այդ ինչպե՞ս եղավ,
Ախ, ինչպե՞ս եղավ,
Որ հրաշքների, պալատների հետ
Խեղճ մանկությունս էլ մնաց անհամվել
Փլատակների ու քարերի տակ...

Գ. Թ. № 11, 10 մարտի 1989 թ.

# 1988. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7. ԱՐՀԱՎԻՐՔԻ ՀԵՏՔԵՐԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ






Լուսանկարները՝ Ա. ՄԱԿԱՐՅԱՆԻ

ՕԳՈՍՏՈՍ № 38 1991 Թ.



ՍԵՅՐԱՆ ԾԱՎԱՐԾԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Ծնվել է 1948 թվ., օգոստոսի 9-ին, Կիրովականում: Սիրել է նկարչությունը, գրաղվել սպորտով: «Սպարտակ» ընկերությունում բռնցքամարտ էր պարապում: 1970-ից աշխատել է «Շիրակշին» միավորումում: Հյուսն - պարկետագործ էր: Աշխատանքի հետ մեկտեղ հեռակայել է Մոսկվայի Սուրիկովի անվան ինստիտուտը: Սիրում էր բնությունը և գեղեցիկը:

1978 թվականին ամուսնացավ և երկու աղջիկ ունեցավ: Սեյրանը հոգատար հայր և ամուսին էր: 1988 թվականին լրացավ 40 տարին, ամուսնության 10 տարին: Ավերիչ երկրաշարժը խլեց նրա կյանքն ու երազանքները: Դեկտեմբերի 6-ի առավոտյան դուրս գալով պատշգամբ, տեսավ կարմիր արև, որը կարծես կրակ լիներ: Այրող արևը դարձավ լացող աներև ժողովրդի գլխին: Նա կանխազգում էր, որ երկրաշարժ է լինելու: Այդ արհավիրքի օրը, ամսի 7-ի առավոտյան խոսում էր աղջկա մասին, խոսում էր կյանքի, երկու աղջիկների ապագայի մասին: Նա այդպես էլ չիմացավ, որ չի գտնվել փոքր Սուսաննան:



ՍՈՒՍԱՆՆԱ ՍԵՅՐԱՆԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Ծնվել է 1987 թվ., հուլիսի 24-ին: Սուսաննայի ծնունդը ուրախացրեց մեզ բոլորիս: Կանխածին էր, բայց անմիջապես կազդուրվեց և դարձավ կապուտաչյա, շեկ մազերով աղջնակ:

Դեկտեմբերի՛ 7-ի օրը, ավերիչ երկրաշարժի առավոտյան Սուսաննային տարա 10 հարկանի շենքը, որտեղ ապրում էր տատիկը: Այդ օրը առաջին անգամ փոքրիկս լաց եղավ, չէր գնում տատիկին: Չէր ուզում անջատվել, բայց ես չէի հասկանում: Կարծես զգում էր, որ այլևս չի տեսնելու ինձ: Երբեք չեմ մոռանա նրա լացակումած աչքերը, թաթիկները, որ մեկնել էր: Աչքերիս առջև իջավ 10 հարկանի շենքը, բայց չգտա փոքրիկ Սուսաննային տատիկի հետ մեկտեղ:

Հարգելի ընթերցողներ, եթե ձեզանից որևէ մեկը տեսել է նրանց ողջ կամ զոհված, հայտնեք խմբագրություն: Մինչև հիմա փնտրում եմ նրանց: Տատիկն ու Նորաբողբոջ իմ բալիկը իրենց գերեզմանը չունեցան:



ԾՆՎԵԼ ԷՐ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՏԱՐՈՒՄ

ՎԱՐԴՈՒԾ ՄԵԽԱԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ (ԻՍՐԱՅԵԼՅԱՆԸ) ծնվել է 1926 թ., փետրվարի 13-ին, Լենինականում: Գերազանցությամբ ավարտել է № 4 դպրոցը, այնուհետև ընդունվել բժշկական ուսումնարանը, սակայն ուսումը թողնելով աշխատանքի է անցել: Նա իր ողջ կյանքում աշխատել է և միշտ օգնել է նեղության մեջ գտնվողներին: Երեք զավակների մայր էր: Իր ամբողջ կյանքը նվիրել էր իր զավակներին: Շատ դժվարություններ էր տեսել կյանքում: Բայց և այնպես ուսումն էր տվել իր երեք զավակներին: 20 տարի շարունակ աշխատել էր Չկալովի անվան կարի արտադրական միավորումում: Սիրված և հարգված էր շրջապատի և աշխատանքային ընկերների շրջանում: Սիրում էր խոսել արվեստի և երաժշտության շուրջ: Ուղղություն էր տալիս բոլորին, երբ որ սխալ քայլի էին դիմում: Վարդուշ տատիկը չիմացավ էլ, որ երկրաշարժը խլեց մեծ որդու և երկու թոռնիկների կյանքը:

## … Սիրտս դեռ ճաքեր է տալիս

Ընտանիքով որդի էինք սիրում: Բայց առաջին երկուսն էլ աղջիկներ ծնվեցին: Յոթ տարեկան էր, Էլմիրայիս հինգն էլ չէր բոլորել, երբ ծնվեց Ժիրայրս: Դա ապրիլի 13-ին էր, 1980 թվականին: Ուրախությունն ու ծնողական երջանկությունը կատարյալ էին: Մեծանում էր որդիս առանց ավելորդ հոգս պատճառելու, առողջ էր ու շարժուն: Քույրերի գուրգուրանքի առարկան էր, տատի ու մոր աչքի լույսը, պապի ու հոր ծուխը ծխացնողը:

Քույրերի հետ Ժիրայրս հաճախում էր № 16 դպրոցը: Ուրախացնող գնահատականներ էր բերում: Լուսանկարը դպրոցի միջանցքի պատին էին փակցրել՝ ուսման առաջավորների ցուցատախտակին:

Փոքր էր Ժիրայրս, բայց մարդամոտ, ուշադիր ու հոգատար: Շատ հետաքրքրասեր էր: Գիրք էր սիրում ու երաժշտություն, մայրենի լեզու ու մաթեմատիկա, ֆուտբոլ ու հեծանիվ:

Նոր բնակարան էինք ստացել Լենինգրադյանի վրա: Հասցրինք մի քանի ամիս ապրել: Բայց Ժիրայրս չէր կարող կտրվել պապիկի տնից: Դեկտեմբերի 6-ին էր, որ պապիկի հետ նոր տունն էր եկել: Խնդրեցի, որ մնա՝ չմնաց: Գնաց պապիկի հետ: Էլ չտեսա միհատիկ որդուս:

Ավելի սարսափելի բան չեմ պատկերացնում՝ զավակներդ փլատակների տակ տանջվում են, վախենում, խեղդվում, մահանում, իսկ օգնել չես կարող: Երեք զավակներս էլ մնացել էին դպրոցի փլատակների տակ: Յեղրայիս դասարանի տղան էր օգնել: Էլմիրայիս 10-րդ դասարանցի Արթուրն էր փրկել: Այն Արթուրը, որն հասցրել էր դուրս պոկվել փլվող շենքից, փրկվել, հետո էլ համադասարանցիներին օգնել ու … երկրորդ ցնցումից փլատակների տակ մնացել:

Ժիրայրին գտանք նույն օրը, ժամեր անց, ուսուցչուհու՝ Գայանե Կարապետյանի ձեռքը բռնած:

Մեղքի ահավոր զգացում ունեմ, որդիս, որ չեմ կարողացել փրկել քեզ: Գուցե սխալվում եմ, բայց միշտ թվում է, թե փրկելու համար ամեն ինչ չէ, որ արել ենք: Որ բոլորին օգնելու պատրաստ որդուս օգնող չեղավ:

Շատ եմ կարոտել քեզ, բալես…

*ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՆԱՍՅԱՆ*



ԺԻՐԱՅՐ ՄԻՆԱՍՅԱՆ



Զինվորական հիվանդանոցը երկրաշարժից հետո:
Լուսանկարը՝ Հ. ՄԱՐԱՔՅԱՆԻ

«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ
ԿՈՒՄԱՅՐԻ ՏՊԱՐԱՆ